

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-21/7-2»**

ք. Երևան

« 13 » ապրիլի 2021թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գ. Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆերդիկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ մասնկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա **ծառայությունների առավելագույն գինը կազմում է 4,400,000 (չորս միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝  
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ **2,400,000 (Երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:**

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ **9,708,800 (ինը միլիոն յոթ հարյուր ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:**

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>1</sup>: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման՝ դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

<sup>1</sup> Տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ  
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,  
Կառավարական տուն, 1  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Կ 025055554

Հ/Կ 025055554



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆերդիկ» ՍՊԸ  
ք. Երևան, Բագրատունյաց 93  
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ,  
Շենգավիթ մասնաճյուղ  
Հ/Կ 163018009536  
Հ/ԿԿ 02247951



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

		Ծառայության				մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետ*
2	50111130-2	ՎԱՐ-20214-126-20 և CHEVROLET NIVA տեսակի (քանակը՝ 17 հատ և 2 հատ) ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն աղյուսակ 1-ի	դրամ	4 400 000	1	Ծառայության մատուցումը՝ ք. Երևան, մատակարարի գործունեության հասցե, իսկ մատուցման արդյունքը հավաստող փաստաթղթերը՝ ք. Երևան, Կոմիտաս 49/2	Պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել քան մեկ ամիս ընդգրկել օրվանից հետո 25-ը:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

Վարչապետի աշխատակազմ  
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,  
 Խնայակազմի տուն, 1



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Ֆերդիկ» ՍՊԸ  
 ք. Երևան, Բազրատուկյաց 93  
 «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ,



Շնչգալիթ մասնաճյուղ  
 Հ/Հ 163018009538  
 Հ/Հ Հ 02247951

*[Handwritten signature]*  
 Կ.Տ.

**Աղյուսակ 1**

ՀՀ դրամ

(ծառայությունների միավոր գները հաշվարկված են Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի համաձայն)

Հ/Հ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները ըստ չափաբաժինների
		Չափաբաժին 2 ՎԱԶ-20214-126-20 CHEVROLET NIVA
1	2	3
1	Բռնկման համակարգի ստուգում	741
2	Սառեցման համակարգի ստուգում	741
3	Յուղման համակարգի ստուգում	741
4	Արտացման համակարգի ստուգում	741
5	Կցորդման համակարգի ստուգում	741
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	741
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	741
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	741
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	741
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	741
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	741
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	741
13	ABS համակարգի ստուգում	741
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	741
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	741
16	Թափքի վիճակի ստուգում	741
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	741
<b>SU - 1 ներառվող ծառայությունների անվանումը</b>		
<b>1. Շարժիչ</b>		
18	Շարժիչի հանում և տեղադրում	7416
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	16068
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	16068
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	21012
22	Շարժիչի վերանորոգում	49440
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	2966
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	2472
25	Նույնը աջի համար (V6)	3708
26	Նույնը ձախի համար (V6)	2472
27	Շարժիչի բլուկի գլխիկի հանում և տեղադրում	11124
28	Նույնը աջի համար (V6)	16068
29	Նույնը ձախի համար (V6)	4944
30	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	4944
31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	11124
32	Փականի խցուկի փոխարինում	741

33	Բաշխիչ լիտերի հանում և տեղադրում	4944
34	Նույնը V6-ի ձախի դեպքում	8652
35	Նույնը V6-ի աջի դեպքում	8652
36	Նույնը DOHC դեպքում	4944
37	Բաշխիչ լիտերի խցուկի փոխարինում	6180
38	Հրիչի փոխարինում SOHC	741
39	Նույնը DOHC դեպքում	494
40	Ատամնավոր փոկի փոխարինում	11124
41	Ծնկածև լիտերի առջևի խցուկի փոխարինում	3461
42	Ծնկածև լիտերի հետևի խցուկի փոխարինում	9888
43	Մխոցային օդակների փոխարինում	21012
44	Թափանիվի հանում և տեղադրում	6180
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
45	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	494
46	Յուղի պոմպի փոխարինում	1978
47	Ղեկավարման բլոկի վերանորոգում	4944
48	Բռնկման կարգավորում	1236
49	CO կարգավորում	741
50	խարնարակի հանում և տեղադրում	1236
51	Խարնարակի վերանորոգում	1483
52	Օդի գտիչի փոխարինում	494
53	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	1236
54	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	3708
55	Բենզամղիչի փոխարինում	1236
56	Վառելիքի գտիչի փոխարինում	1236
57	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1978
58	Տրամյորի հանում և տեղադրում	741
59	Տրամյորի վերանորոգում	494
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>		
60	Հովհարի փոկի հանում և տեղադրում	494
61	Հովհարի հանում և տեղադրում	2966
62	Ուղիատորի հանում և տեղադրում	3708
63	Նույնը կոնդիցիոների դեպքում	3708
64	Ուղիատորի վերանորոգում	8652
65	Թերմոստատի փոխարինում	2472
66	Ջրի պոմպի փոխարինում	2966
67	Ընդարձակող բաքի փոխարինում	741
68	Խլարարի հանում և տեղադրում	1236
69	Նույնը DOHC դեպքում	12360
70	Ուղիատորի փողրակի հանում և տեղադրում	1236
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>		
71	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	3708
72	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	2472
73	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	6180
74	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1236
75	Կցորդման ճուպանի հանում և տեղադրում	1236
76	ՓՏ-ի հանում և տեղադրում	7416
77	ՓՏ-ի վերանորոգում	23484

78	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1236
79	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	6180
80	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	2472
81	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	8652
82	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	14832
83	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	13596
84	ԱՓՏ-ի վերանորոգում	86519
85	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	3708
86	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	3708
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	
87	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	4944
88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	16068
89	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	3708
90	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	2966
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	2472
92	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	3214
93	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	3708
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
94	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	6180
95	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	16068
96	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	8652
97	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	2966
98	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	1978
	<b>7. Կախոց</b>	
99	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	6180
100	Տրավերսի հանում և տեղադրում	3708
101	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	2966
102	Անվակունդի առանցքակալի փոխարինում	2966
103	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	1978
104	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	2966
105	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	2966
106	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	1483
107	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	1236
108	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1236
109	Չսպանակի հանում և տեղադրում	1236
110	Չսպակի հանում և տեղադրում	1236
111	Չսպակի վռանների փոխարինում	1978
112	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1483
113	Ներքևի լծակի հանում և տեղադրում	1236
114	Ներքևի լծակի վռանի փոխարինում	1236
115	Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում	1607
116	Միջին ձգանի հանում և տեղադրում	1236
117	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	494
118	Վերևի լծակի հանում և տեղադրում	1483
119	Վերևի լծակի վռանների փոխարինում	1730
120	Գնդե հողակապերի փոխարինում	1978
121	Ծայրակների հանում և տեղադրում	1236
122	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	1978

123	Առջևի կայունարարի վռանի փոխարինում	989
124	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	989
125	Հետևի զսպանակի փոխարինում	1236
126	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1236
127	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	1978
128	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	1978
129	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	1978
130	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	1483
131	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1483
132	Անվաբացքի կարագավորում	1978
133	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	741
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>		
134	Ղեկային կալունի հանում և տեղադրում	3708
135	Նույնը V6-ի համար	7416
136	Ղեկային կալունի վերանորոգում	12360
137	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	1236
138	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	1978
139	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	3708
140	Նույնը DOHC դեպքում	3708
141	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	1236
142	Նույնը DOHC դեպքում	1236
143	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	1236
144	Նույնը DOHC դեպքում	1236
145	Նույնը կոնդիցիոների դեպքում	3708
146	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	2966
147	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	3214
<b>9. Արգելակային համակարգ</b>		
148	Գլխ. գլանի հանում և տեղադրում	3708
149	Գլխ. գլանի վերանորոգում	3708
150	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	3708
151	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3708
152	Բանվ. գլանի վերանորոգում	3708
153	Արգելակային համակարգի օդահանում	1236
154	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1978
155	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1978
156	Առջևի սուպպորտի վերանորոգում	1978
157	Հետևի սուպպորտի վերանորոգում	1978
158	Արգելակային փողրակի փոխարինում	494
159	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	989
160	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	989
161	Հետևի կոճղակների փոխարինում	989
162	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	1236
163	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	1236
164	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1236
165	ABS-ի հանում և տեղադրում	2472
166	ABS-ի վերանորոգում	4944
167	Չեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	2472
168	Չեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1236

10. Էլեկտրասարքավորում		
169	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1236
170	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	2472
171	Գեներատորի հանում և տեղադրում	1978
172	Նույնը V6-ի դեպքում	2966
173	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	2966
174	Գեներատորի վերանորոգում	1978
175	Մեկնարկիչի հանում և տեղադրում	1978
176	Մեկնարկիչի վերանորոգում	1978
177	Առջևի լապտերի հանում և տեղադրում	741
178	Հետևի լապտերի հանում և տեղադրում	741
179	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1236
180	Վազքաչափի հանում և տեղադրում	1978
181	Վազքաչափի ճուպանի հանում և տեղադրում	1236
182	Սաքերի պանելի հանում և տեղադրում	3708
183	Արագաչափի հանում և տեղադրում	2472
184	Ազդանշանի հանում և տեղադրում	1236
185	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	1236
186	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	2472
187	Ազդանշանային համակարգի տեղադրում	2472
188	Մագնիստոլայի տեղադրում	1236
189	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1236
190	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	3708
191	Էլ/հաղորդալարերի հիմն, խուրցի հանում և տեղադրում	3708
192	Էլ/հաղորդալարերի երկրորդ, խուրցի հանում և տեղադրում	2472
193	Էլեկտրական տվիչների փոխարինում	741
194	Էլեկտրական անջատիչների փոխարինում	494
195	Վառոցքի մոմի փոխարինում	742
196	Կոնդիցիոների լիցքավորում	2966
197	Կոնդիցիոների վերանորոգում	1236
11. Այլ ծառայություններ		
198	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	1236
199	Ավտոմեքենայի լվացում	371
200	Անիվի հանում և տեղադրում	247
201	Անվաղողի վերանորոգում	989
202	Անիվի բայանսավորում	247
203	Անիվի վալց	1236
204	ՇՕ-գողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1236
205	Խառատային աշխատանքներ 1 ժամ	1236
206	Փականագործի աշխատանքներ 1 ժամ	1236
207	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	371
<b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b>		
<b>1.Շարժիչ</b>		
1	Շարժիչի բլոկ	112475
2	Շարժիչի գլխիկ	92699

3	Բարձիկ	6180
4	Շարժիչի գլխիկի միջադիր	3214
5	Շարժիչի վերանորոգման կոնպլեկտ	135959
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	19776
7	Շարժիչի փական դուրս մղող	742
8	Շարժիչի փական ներս մղող	742
9	Շարժիչի փականի խցուկ	247
10	Ծնկածն լիսեռ	29664
11	Ծնկածն լիսեռի խցուկ առջևի	1236
12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	1236
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	2472
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	4944
15	Հենակային տափողակ	494
16	Մխոց	9888
17	Մխոցային օղակներ	8652
18	Ատամնանիվ	2472
19	Ատամնավոր փոկ	9888
20	Շղթա	6180
21	Հիդրոձգան	3708
22	Հրիչ	1236
23	Հիդրոհրիչ	2472
24	Բաշմակ	1978
25	Հանգստարար	1236
26	Թափանիվ	3708
27	Թափանիվի պսակ	742
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	247
29	Շկիվ	3708
30	Շարժաթև	2472
31	Կարտերի միջադիր	494
32	Միջադիր	3708
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
33	Յուղ շարժիչի հանքային, (1 լիտր) (Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	865
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, (1 լիտր) (Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	989
35	Յուղ շարժիչի սինթետիկ (1 լիտր) (Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	1236
36	Յուղի գտիչ	618
37	Յուղի պոմպ	6180
38	Յուղի պոմպի շարժաբեր	12360
39	Յուղի ռադիատոր	2472
40	Յուղի փողրակ	989
41	Յուղի ծորակ	1236
43	Վառոցքի մոմ	989
44	Բենզոլբաք	8652
45	Խառնարակ	742
46	Խառնարակի վերանորոգման հավաքածու	7416
47	Ինժեկտորի ֆորսունկա	2472
48	Վառելանյութի մղիչ էլեկտրական	2472

49	Վառելանյութի մղիչ մեխանիկական	742
50	Վառելանյութի գտիչ	7416
51	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	1236
52	Վառելանյութի փողրակ	1978
53	Աքսելերատորի ճուպան	2472
54	Օդի գտիչ	989
55	Ջերմաստիճանային տվիչ	3708
56	Յուղի տվիչ	3708
57	Բաշխիչ լիսեռի տվիչ	3708
58	Օդի ծախսի տվիչ	11124
59	Արագաչափի տվիչ	3708
60	Հովհարի տվիչ	3708
61	Ջրի տվիչ	3708
62	Բենզոլի տվիչ	3708
63	Մարման ընթացքի կարգավորիչ	3708
64	Մարման ընթացքի տվիչ	3708
65	Դեկավարման համակարգիչ	13596
66	Պարապ ընթացքի տվիչ	3708
67	Դրոսելային փականի տվիչ	3708
68	Թթվածնի տվիչ	3708
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>		
69	Հովհարի փոկ	1978
70	Հովհար	3708
71	Ռադիատոր	16068
72	Ընդարձակող բաք	3708
73	Ռադիատորի փողրակ	1978
74	Թերմոստատ	3708
75	Ջրի պոմպ	5908
76	Ջրի պոմպի առանցքակալ	1236
77	Ջրի պոմպի թևակ	3708
78	Սառեցման հեղուկ (1 լիտր)	742
79	Ջրի պոմպի տնանիվ	494
80	Հոլովակ	494
81	Փոկ	1236
82	Փոկ կոնդիցիոների	371
83	Ծորակ	1236
84	Խլարարի ներդիր	742
85	Խլարարի կախոց	742
86	Կրոնշտեյն	494
87	Անուր (Խամուտ)	124
88	Խլարար	14832
89	Ռեզոնատոր	6180
90	Վառարանի ռադիատոր	9888
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>		
91	Կցորդման բանվորական գլան	6180
92	Կցորդման գլխավոր գլան	5438
93	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	2966
94	Կցորդման տանող սկավառակ	4944

95	Կցորդման տարվող սկավառակ	4944
96	Կցորդման առանցքակալ	3708
97	Կցորդման փողորակ	1236
98	Փոխանցման տուփ	173039
99	ՓՏ-ի առջևի խցուկ	1978
100	ՓՏ-ի հետևի խցուկ	1978
101	ՓՏ-ի առանցքակալ	2966
102	ՓՏ-ի առաջնային լիսեռ	6180
103	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	7910
104	ՓՏ-ի եղանիկ	4450
105	ՓՏ-ի ատամնանիվ	4697
106	Համաժամիչ	3708
107	Մուֆտ	10382
108	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	4450
109	ԱՓՏ-ի զտիչ	8652
110	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	18540
111	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	19776
112	Տրանսմիսսիոն յուղ, (1 լիտր)	1978
113	ԱՓՏ յուղ, (1 լիտր)	2966
114	ՓՏ-ի առաջնային լիսեռ	494
115	Հերմետիկ (125գր)	1236
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	
116	Բաշխիչ տուփ	45732
117	Բաշխիչ տուփի խցուկ	3708
118	Բաշխիչ տուփի առանցքակալ	4450
119	Բաշխիչ տուփի ատամնանիվ	7910
120	Բաշխիչ տուփի լիսեռ	8652
121	Կարդանային լիսեռ	6180
122	Էլաստիկ մուֆտ	6180
123	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	5191
124	Կարդանային լիսեռի խաչուկ	3955
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
125	Հետևի կամ առջևի կամրջակ	61800
126	Ռեդուկտոր	13794
127	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	2472
128	Դիֆֆերենցիալ	2472
129	Դիֆֆերենցիալի սատելլիտ	2472
130	Տանող ատամնանիվի խցուկ	1978
131	Տանող ատամնանիվի առանցքակալ	1978
132	Դիֆֆերենցիալի առանցքակալ	3708
133	Կիսատնի	5438
134	Կիսատնու առանցքակալ	2472
135	Կիսատնու միջադիր	2225
136	Կիսատնու խցուկ	1730
137	Կարգավորիչ տափողակ	618
	<b>7. Կախոց</b>	
138	Տրավերս	6180
139	Կրոնշտեյն	494

140	Չախ կամ աջ հողակապ	8652
141	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	1483
142	Անվակունդ	6180
143	Անվակունդի խցուկ	1236
144	Անվակունդի ներքին առանցքակալ	3708
145	Անվակունդի արտաքին առանցքակալ	3708
146	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	3708
147	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	3708
148	Չախ կամ աջ հողակապի խցուկ	1236
149	Հարվածամեղմիչի թասակ	2719
150	Զսպանակ	3708
151	Առջևի հարվածամեղմիչ	6180
152	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	1236
153	Հարվածամեղմիչի վռան	742
154	Ներքևի լծակ	6180
155	Ներքևի լծակի վռան	989
156	Վերևի լծակ	61800
157	Վերևի լծակի վռան	1236
158	Գնդե հողակապ	2472
159	Առջևի կայունարար	3708
160	Առջևի կայունարարի վռան	742
161	Առջևի կայունարարի առջևի վռան	618
162	Հետևի զսպանակ	2472
163	Հետևի ցնցամեղմիչ	4944
164	Հետևի մետաղածող (շտանգա)	3708
165	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	989
166	Հետևի անկյունագծային լծակ	2472
167	Անկյունագծային լծակի վռան	1236
168	Զսպակ (ռեստրա)	12360
169	Զսպակի վռան	1978
170	Զսպակի միջադիր	1978
171	Զսպակի բռնիչ	1978
172	Աջ կամ ձախ ձգան	1854
173	Ծայրակալ	1978
174	Չզան մեջտեղի	1236
175	Անվախեծ	4944
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
176	Ղեկային կալուն	21160
177	Ղեկային կալունի առանցքակալ	1236
178	Ղեկային կալունի խաչուկ	3708
179	Հիդրոուժեղարար	2472
180	Հիդրոուժեղարարի փոկ	1236
181	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	2472
182	Հիդրոուժեղարարի պոմպ	4944
183	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	2472
184	Ղեկային ծող	1236
185	Ղեկային ծողի ծայրակալ	1236
186	Հիդրոուժեղարարի յուղ. (1 լիտր)	1236

187	ճոճանակ	3708
188	ճոճանակի վռան	494
	<b>9 Արգելակային համակարգ</b>	
189	Գլխ. գլան	5438
190	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1978
191	Վակուումային ուժեղարար	6180
192	Բանվ. գլան	3708
193	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	1236
194	Արգելակային փողրակ	494
195	Սուպպորտի ուղղորդիչ	989
196	Սուպպորտի մանժետ	1236
197	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	6180
198	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	4944
199	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	3708
200	Առջևի արգելակային սկավառակ	4944
201	Հետևի արգելակային սկավառակ	4944
202	Ձեռքի արգելակի ճուպան	1236
203	ABS-ի տվիչ	1236
204	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	618
205	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	989
206	Ձեռքի արգելակի ճուպան	1978
	<b>10 էլեկտրասարքավորում</b>	
207	Գեներատոր	16068
208	Գեներատորի դիողային կամրջակ	1236
209	Գեներատորի ռեկտ	3708
210	Գեներատորի առանցքակալ	1236
210	Ստարտեր	1236
211	Ստարտերի ռեկտ	22001
212	Ստարտերի ածուխ	3708
213	Բենդեքս	2472
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	2472
215	Առջևի լապտեր	2472
216	Առջևի թարթիչ	7416
217	Հետևի լապտեր	1236
218	Հետևի թարթիչ	2472
219	Արգելակային լապտեր	1236
220	Լամպ	2472
221	էլեկտրական անջատիչ	1236
222	էլեկտրական տվիչ	247
223	էլեկտրական չափիչ սարք	247
224	Բռնկման կողպեք	247
225	էլեկտրալարերի գլխավոր խուրց	1236
226	էլեկտրալարերի երկրորդային խուրց	11124
227	Վառոցքային լարերի խուրց	3708
228	Վառոցքի մոմի ծայրակալ	3708
229	Վազբաչափ	494
230	Վազբաչափի ճուպան	494
231	Արագաչափ	1236

232	Ազդանշան	1236
233	Ապակեվացիչ	2472
234	Ապակեվացիչի շարժիչ	742
235	Դռների կենտրոնական փական	1236
236	Ազդանշանային համակարգ	1236
237	Մագնիտոլա	4944
238	Էլեկտրաամբարձիչ	6180
239	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	2472
240	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	247
241	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր զին 1դ/մ վերանորոգման համար	3708
	<b>Ընդամենը</b>	<b>2,400,000</b>

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝

SU – 1 ծառայություն / տեխ. զննում՝ ըստ հավելվածի/,

SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում՝ ըստ հավելվածի:

1 - պարրադիիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը,

2 - տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում:

Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով՝ առնվազն երեք ու կես փոննա բարձրացնելու կարողությամբ, անվաբացքի ուղղման սրենդով, ինժեկտորների լվացման սրենդով, թափքի ուղղման սրենդ, չորացման, դիփահոր:

Ծառայությունները պետք է մարուցվեն փրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**

Վարչապետի աշխատակազմ  
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,  
Կառավարական տուն, 1  
ՀՀ ՖՆ գործերի անվան ինժեներություն



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Ֆերդիկ» ՍՊԸ  
ք. Երևան, Բազրատունյաց 93  
«ՀԱՅԷԿՈՆՍՏՐԱՆԿ» ԲԲԸ,  
Շենգավիթ մասնաճյուղ  
Հ/Հ 163018009536



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված ապահովման համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										Ընդամենը			
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր		նոյեմբեր	դեկտեմբեր	
2	50111130-2	ՎԱՁ-20214-126-20 և CHEVROLET NIVA տեսակի (քանակը՝ 17 հատ և 2 հատ) ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	1 320 000	1 320 000	1 320 000	2 200 000	2 200 000	2 200 000	4 400 000	4 400 000	4 400 000	4 400 000	4 400 000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:  
 \* Վճարումները կիրականացվի փաստացի մարտցված ծառայությունների դիմաց:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ  
 ք.Երևան, Հանրապետության հրապարակ,  
 Կառավարական տուն, 1  
 ՀՀ ՖԼ գործարարական վարչություն



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ֆերդիկ» ՍՊԸ  
 ք. Երևան, Բագրատունյաց 93  
 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ,  
 Շենգավիթ մասնաճյուղ  
 Հ/Հ 163018009536  
 Հ/Հ ՀՀ 02247951



Պայմանագրի կողմ  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N    հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝ «    »

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
Կ.Տ.

ԱԿՏ N  
 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և \_\_\_\_\_-ի  
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_  
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը  
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման  
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

### ԿՈՂՄԵՐԸ

#### Հանձնեց

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
ստորագրություն

#### Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_  
ազգանուն, անուն  
 \_\_\_\_\_  
ստորագրություն